

Ելք 11-55

28 դեկտեմբերի 2011

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ
Տիգրան Սահակյանին

AMICUS CURIAE

ԵՄԴ/0060/01/11 գործով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Տիգրան Պետրոսյան) 2011թ. նոյեմբերի 28-ին վճռեց Անդրանիկ Թաթուլի Մակվեցյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 1-ին մասով սահմանված հանցագործություն կատարելու համար և դատապարտեց ազատազրկման՝ 6 ամիս ժամանակով:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ն (ՔՀԻ) գտնում է, որ Մակվեցյանի արարքում բացակայում է նշված քրեաիրավական նորմի հանցակազմը: Ավելին, նշված նորմը չի բավարարում իրավական որոշակիության՝ սահմանադրական և միջազգային իրավական չափանիշը: ՔՀԻ նաև գտնում է, որ սեփական համոզմունքները քարոզելու յուրաքանչյուր անձի իրավունքը մարդու հիմնարար իրավունք է և ենթակա է պաշտպանության:

ՔՀԻ իրականացրել է նշված նորմի, ինչպես նաև մի շարք այլ նորմերի և ինստիտուտների վերլուծություն, որը ներկայացվում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին, ինչպես նաև հանրությանը, որի միակ նպատակն է աջակցել դատարանին՝ արդար դատաքննություն իրականացնելու և արդար դատավճիռ կայացնելու հարցում:

Արման Դանիլյան

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ի նախագահ

Կազմակերպության մասին

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» (ՔՀԻ) հասարակական կազմակերպությունը հիմնվել է 1998թ. Երևանում: Այն նպատակ ունի աջակցել Հայաստանում ազատ, ժողովրդավարական հասարակության կայացման գործընթացին:

Կազմակերպության գործունեության ուղղություններն են՝

Ազատագրկման վայրերի մոնիտորինգը նպատակ ունի ապահովելու ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը՝ պարբերաբար այցելությունների, խնդիրների վերհանման և առաջարկությունների մշակման միջոցով:

Օրենսդրական փոփոխությունների մշակումն ու լոբբինգն ուղղված է մարդու իրավունքները կարգավորող պետական օրենսդրության բարելավմանը, արդյունավետ կիրառմանը և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը նպատակ ունի հասարակության և մասնագետների ուշադրությունը հրավիրել հատուկ դեպքերի վրա, լուծումներ տալ խնդիրներին և աջակցություն ցուցաբերել այդ խախտումներից տուժողներին, ինչպես նաև աջակցել անպատժելիության մթնոլորտի վերացմանն ու հանցագործներին պատասխանատվության ենթարկելուն:

Մարդու իրավունքների խնդիրների լուսարանումն իրականացվում է Մարդու իրավունքները Հայաստանում ինտերնետային կայքի՝ www.hra.am միջոցով: Կայքի հիմնական նպատակն է ավելի մեծ ուշադրություն հրավիրել մարդու իրավունքներին, ինչպես նաև կենտրոնացնել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության բոլոր ռեսուրսները՝ խնդիրների արձարձման և ինտերնետային կայքի կրթական, վերլուծական և տեղեկատվական գործիքների միջոցով:

Հասարակության իրազեկությունն իրականացվում է ազատությունից զրկված մարդկանց իրավունքների վերաբերյալ ուղեցույցերի, տեղեկագրքերի, թերթիկներ հրատարակելու, ինչպես նաև լրատվական միջոցառումների կազմակերպման միջոցով: Իրականացվում է նաև մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներ մասնագետների համար, գործում է հիմնարար իրավունքների մասին իրավաբանական խորհրդատվության թեժ գիծ:

1. 143-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանցակազմի բացակայությունը

2011թ. նոյեմբերի 28-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը դատավճռում նշել է.

«Ըստ քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների՝ ամբաստանյալ Անդրանիկ Մակվեցյանը ելնելով իր դավանանքը տարածելու և քարոզելու սկզբունքից 2011 թվականի մայիսի 15-ին «Սուրբ Երրորդություն» եկեղեցուն հարակից տարածքում տուժող Պարզև Բադոյանին դավանել է Եհովայի վկա կրոնական կազմակերպության դավանանքը և հայացքները: Անդրանիկ Մակվեցյանը խախտել է տուժող Տեր Եսայի քահանա Արթենյանի՝ եկեղեցու և նրա շրջակա տարածքում քարոզչություն կատարելու, անձանց Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության մեջ ներգրավվելու փորձ կատարելու գործողությունները կանխելու նրա իրավունքը: Այսինքն՝ Անդրանիկ Մակվեցյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ»:

Պետք է նկատել, որ դատարանը նշել է Մակվեցյանի՝ «դավանանքը տարածելու և քարոզելու սկզբունքի» մասին, մինչդեռ նման սկզբունք ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ: Նշվածը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 26-րդ և ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված մարդու հիմնարար իրավունք, որը ենթակա է հարգման և պաշտպանության պետության՝ ներառյալ ՀՀ անունից հանդես եկող դատարանի կողմից: Մինչդեռ քահանայի՝ «եկեղեցու և նրա շրջակա տարածքում քարոզչություն կատարելու, անձանց Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության մեջ ներգրավվելու փորձ կատարելու գործողությունները կանխելը» դատարանը համարել է իրավունք: Ավելին, դատարանը պաշտպանել է այդ իրավունքը, մինչդեռ այդպիսի իրավունք ՀՀ Սահմանադրությունը և վավերացված միջազգային պայմանագրերը չեն նախատեսում:

«Քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը» վերնագրված ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին՝ ...»

Նշված քրեաիրավական դրույթով արգելված արարք կատարելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը ուղղակի կամ անուղղակի խախտի մեկ այլ անձի՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, որը պայմանավորված է խտրական

վերաբերմունքով, և էական վնաս պատճառի տուժողի օրինական շահերին: Այսինքն, քննարկվող գործով դատարանը պետք է՝

- 1/ մատնանշեր տուժողներ Արթենյանի և Բադոյանի՝ մարդու և քաղաքացու այն իրավունքները և համապատասխան իրավական ակտերը, որոնք խախտել է Մակվեցյանը,
- 2/ ապացուցեր, որ Մակվեցյանը խախտել է դրանք,
- 3/ ապացուցեր Մակվեցյանի արարքի խտրական շարժառիթները,
- 4/ ապացուցեր տուժողների օրինական շահերին վնաս հասցնելու հանգամանքը:

Մարդու և քաղաքացու ո՞ր իրավունքներն է խախտել Մակվեցյանը

Դատարանը մատնանշել է «տուժող Տեր Եսայի քահանա Արթենյանի՝ եկեղեցու և նրա շրջակա տարածքում քարոզչություն կատարելու, անձանց Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության մեջ ներգրավվելու փորձ կատարելու գործողությունները կանխելու նրա իրավունքը»: Դատարանը չի նշել, թե վկայակոչված «իրավունքը» ՀՀ որ իրավական ակտով է սահմանված: Պետք է նշել, որ ՀՀ-ում՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով քահանաները և այլ անձինք չունեն նման իրավունք կամ ազատություն՝ առավել ևս՝ մարդու և քաղաքացու իրավունք կամ ազատություն: Ավելին, քաղաքացու կամ մարդու նման իրավունքներ կամ ազատություններ մարդու իրավունքներ սահմանող որևէ միջազգային փաստաթղթում ամրագրված չեն:

Դատարանը նշել է, որ Մակվեցյանի գործողությունները հանգեցրել են ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով սահմանված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների խախտմանը, որի համաձայն՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը կախված ...կրոնից, ... արգելվում է», իսկ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտ են: Ստացվում է, որ դատարանի ընկալմամբ «Տեր Եսայի քահանա Արթենյանի՝ եկեղեցու և նրա շրջակա տարածքում քարոզչություն կատարելու, անձանց Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության մեջ ներգրավվելու փորձ կատարելու գործողությունները կանխելու նրա իրավունքը» բխում է Սահմանադրության 14.1 հոդվածով սահմանված քաղաքացիների իրավահավասարության իրավունքից կամ նույնացվում է այդ իրավունքի հետ, մինչդեռ օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքը որևէ անձի իրավունք չի վերապահում կանխել կրոնական կազմակերպության մեջ ներգրավվելու փորձ կատարելուն ուղղված մեկ այլ անձի գործողությունները:

Ընդհակառակը, սեփական կրոնական համոզմունքները տարածելն է հանդիսանում հիմնարար իրավունք, որը ՀՀ-ը՝ Սահմանադրության 3-րդ և 26-րդ հոդվածներով,

ինչպես նաև վավերացրած միջազգային պայմանագրերով պարտավորվել է հարգել ու պաշտպանել այլ անձանց ռոնձություններից: Որևէ ֆիզիկական անձ իրավունք չունի կանխել մեկ այլ անձի՝ Մահմանադրության 26-րդ հոդվածով սահմանված իրավունքների իրացումը: Ավելին, ինչպես ցույց է տրվում ներքևում, քարոզի միջոցով այլ անձանց սեփական դավանանքը բացատրելը և կազմակերպության մեջ ներգրավելը խղճի, մտքի և դավանանքի ազատության իրավունքի բաղկացուցիչ մասն է, որի իրացումը պետք է հարգվեր և պաշտպանվեր դատարանի կողմից: Եթե որևէ դավանանք ունեցող անձ իրավունք չունենար այլ անձանց քարոզելու միջոցով փորձել ներգրավել սեփական դավանանքին, ապա դավանանքը քարոզելու իրավունքը կդառնար թղթի վրա գրված անիմաստ արտահայտություն:¹

Այսպիսով, Մակվեցյանը դատապարտվել է տուժողի՝ գոյություն չունեցող մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները խախտելու համար, որի պարագայում Մակվեցյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 1-ին մասով նախատեսված հատկանիշներից մեկը՝ իրավունքներ ու ազատություններ խախտելու հատկանիշը, ինչը դատավճիռը դարձնում է սխալ և անարդար:

Դատավճռի՝ «գործի դատավարական նախապատմությունը» մասը եզրափակվում է դատարանի հետևյալ եզրահանգմամբ.

«Դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները վկայում են այն մասին, որ բացի վերը նշված հանցավոր արարքները կատարելուց, ամբաստանյալ Անդրանիկ Մակվեցյանը կատարել է այլ հանցանք ևս, այն է՝ Անդրանիկ Մակվեցյանը քրիստոնեական եկեղեցու նկատմամբ ատելություն դրսևորելով և իր գաղափարախոսությունը քարոզելու շարժառիթից ելնելով խախտել է քաղաքացի Պարզն Բադոյանի՝ Հայ Առաքելական եկեղեցուն դավանելու, եկեղեցի այցելելու իրավունքը ...էական վնաս պատճառելով Պարզն Բադոյանին...՝ խախտել վերջիններիս ՀՀ Մահմանադրության 8.1. հոդվածով վերապահված իրավունքներն ու ազատությունները»:

Փաստորեն, դատարանը վկայակոչում է մյուս տուժողի՝ Պարզն Բադոյանի՝ Հայ Առաքելական եկեղեցուն դավանելու, եկեղեցի այցելելու իրավունքների խախտումը Մակվեցյանի կողմից: Այսինքն, ըստ դատարանի, իր գործողություններով Մակվեցյանն արգելել է Բադոյանին դավանել Հայ Առաքելական եկեղեցու դավանանքը և այցելել եկեղեցի: Մակայն դատավճռում նշված և հետազոտված չեն այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները: Ստացվում է, որ ըստ դատարանի՝ սեփական համոզմունքները մեկ այլ անձի քարոզելը, այսինքն՝ Մահմանադրությամբ

¹ *Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի (Kokkinakis v. Greece, Series A No. 260-A (1993) 17 EHRR 397)*, ՄԻԵԴ 1993թ. մայիսի 25-ի վճիռը, պարբ. 31

նախատեսված հիմնարար իրավունքն իրականացնելը, կարող է արգելք հանդիսանալ, որպեսզի չափահաս և ինքնուրույն որոշումներ ու ընտրություն կատարելու ունակ անձնավորությունը շարունակի դավանել իր կրոնը և այցելել իր նախընտրած եկեղեցին: Ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ ցանկացած հասուն քաղաքացի միշտ կարող է շրջանցել հանրային տարածքներում իր համոզմունքները քարոզող անցանց և նրանց քարոզը, եթե վերջինս չի կիրառում բռնություն, սպառնալիք կամ օրենքով արգելված այլ միջոցներ: Դատավճռում նշված չեն այն ապացույցները, որով կհիմնավորվեր, որ Մակվեցյանը Բաղդյանի նկատմամբ կիրառել է քարոզի արգելված մեթոդներ, հետևաբար չէր կարող արգելել վերջինիս դավանել իր կրոնը և այցելել իր նախընտրած եկեղեցին:

Ինչպես նշվեց վերևում մեջբերված տեքստում, դատարանը գտել էր, որ Մակվեցյանի գործողությունները հանգեցրել են տուժողների՝ ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածով սահմանված իրավունքների խախտմանը: Այստեղ հարկ է ամբողջությամբ մեջբերել նշված հոդվածի դրույթները.

«Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»:

Այն պնդումը, որ վերը նշված հոդվածում մարդու և քաղաքացու իրավունքներ ու ազատություններ սահմանված չեն և որևէ ֆիզիկական անձ իրավաբանորեն և փաստացի չէր կարող խախտել այդ հոդվածի որևէ դրույթ՝ այնքան ակնհայտ և տրամաբանական է, որ փաստարկման կարիք չունի: Ոստի, Մակվեցյանը, ինչպես որևէ այլ ֆիզիկական անձ, նույնիսկ ցանկության դեպքում չէր կարող խախտել Սահմանադրության 8.1 հոդվածում ամրագրված դրույթները, որոնց շարքում իրավունքներ ու ազատություններ չկան: Այդ դրույթները պարունակում են հիմնարար սկզբունքներ, որոնց միջոցով պետք է կարգավորվեն եկեղեցի-պետություն և պետություն-կրոնական կազմակերպություններ հարաբերությունները: Այդ դրույթներն ուղղված են բացառապես Հայաստանի Հանրապետությանը, ոչ թե ֆիզիկական անձանց:

Դատարանը բազմիցս նշել է դատավճռում, որ Մակվեցյանն ուղղակիորեն խախտել է Սահմանադրության՝ մարդու իրավունքներ սահմանող դրույթներ: Մարդու իրավունքները կարող է խախտել միայն այն սույբեկտը, որը կրում է այդ իրավունքները չխախտելու, հարգելու ու պաշտպանելու իրավական պարտականությունը: Արդյոք Մակվեցյանը կամ որևէ այլ ֆիզիկական անձ ՀՀ Սահմանադրության համաձայն կրում է 2-րդ գլխով սահմանված իրավունքներն ու ազատությունները հարգելու ու պաշտպանելու պարտավորություն: Նման իրավական նորմ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված չէ:

Պետք է հիշեցնել, որ Հայաստանում մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտականությունները կրում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս նրա իշխանությունների, ներառյալ՝ դատական իշխանության: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: Իսկ ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնց սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում»: Նմանատիպ նորմ է պարունակում ՀՀ վավերացրած՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածը: Այսպիսով, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, պաշտպանության և իրացման պատասխանատուն պետությունն է, ոչ թե ֆիզիկական անձինք: Ուստի, ֆիզիկական անձը, չունենալով այլ անձի իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու պարտականություն, պարզապես չէր կարող դրանք խախտել *ուղղակիորեն*:

Պետությունն իր՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու, պաշտպանելու և իրացնելու պարտականությունները կարող է իրականացնել, ի թիվս այլ միջոցների՝ այդ իրավունքների խախտումների դեպքերում սահմանելով քրեական պատասխանատվություն և պատժ: Այս դեպքում ֆիզիկական անձը կարող է ենթարկվել պատասխանատվության և պատժի, եթե քրեաիրավական նորմն արգելում է կատարել որոշակի գործողություններ/անգործություն՝ նորմում նշված մարդու կամ քաղաքացու իրավունքի կամ ազատության առնչությամբ: Այս պարագայում կոնկրետ իրավունքն այդ նորմի կողմից պաշտպանվող օբյեկտն է: Խախտելով քրեաիրավական նորմի արգելքը, անձն *անուղղակիորեն* խախտում է մարդու հիմնարար իրավունքը կամ ազատությունը, որը սահմանված է Սահմանադրության 2-րդ գլխով կամ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով: Ուստի, դատարանի այն հետևությունները, որ Մակվեցյանն *ուղղակիորեն* է խախտել ՀՀ Սահմանադրության նորմերը՝ որոնք պարտավորություններ են սահմանում ՀՀ համար, սխալ են, քանի որ ֆիզիկական անձինք ուղղակիորեն չեն կրում Սահմանադրական իրավունքները կամ

միջազգային պայմանագրերով սահմանված մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու կամ իրացնելու պարտականությունները:

2. Դավանանքը քարոզելու անձի ազատությունը

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես *միայնակ*, այնպես էլ այլոց հետ համատեղ *քարոզի*, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների *միջոցով արտահայտելու ազատությունը*:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Իսկ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես *միանձնյա*, այնպես էլ այլոց հետ համատեղ և *հրապարակա՛վ* կամ մասնավոր կարգով, *քարոզչության*, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի *միջոցով արտահայտելու ազատություն*:

2. Մեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների»:

ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի դրույթները կոնկրետ փաստերի առնչությամբ վերլուծելիս անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հինգ հիմնական հարցերին.

- Արդյոք 9-րդ հոդվածը կիրառելի է:
- Արդյոք պետության կողմից տեղի է ունեցել միջամտություն՝ 9-րդ հոդվածով սահմանված իրավունքների իրականացման նկատմամբ:
- Արդյոք միջամտությունը սահմանված էր ներպետական օրենքով:
- Արդյոք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ:

- Արդյոք միջամտությունն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակության մեջ:

ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի կիրառելիությունը և միջամտության առկայությունը

Քննարկվող գործով ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածը կիրառելի է, քանի որ դատարանը՝ պաշտպանելով քահանայի՝ «եկեղեցու և նրա շրջակա տարածքում քարոզչություն կատարելու, անձանց Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության մեջ ներգրավվելու փորձ կատարելու գործողությունները կանխելու նրա իրավունքը»՝ թույլ է տալիս սեփական համոզմունքները քարոզող՝ այսինքն 9-րդ հոդվածով սահմանված իրավունքն իրացնող, կրոնական կազմակերպության ներկայացուցչի գործողությունների կանխումը մեկ այլ անձի կողմից: Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր քահանա, հիմնվելով դատավճռի վրա, կարող է արգելել եկեղեցուն չպատկանող տարածքում այլ դավանանքի քարոզի իրականացումը այլ անձաց կողմից, համարելով, որ նման մարդու իրավունք կամ ազատություն ունի: Նման իրավունք վերապահելով այլ անձանց և պաշտպանելով այդ իրավունքը՝ դատարանի դատավճիռն ուղղակիորեն շոշափում է եկեղեցու մոտակայքում քարոզ իրականացնող անձանց իրավունքները, ինչը 9-րդ հոդվածը կիրառելի է դարձնում քննարկվող փաստերի առնչությամբ:

Նույն հիմնավորմամբ դատավճիռը նաև հանգեցնում է ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածով սահմանված իրավունքների իրականացման միջամտության, իսկ ինչպես նշվեց վերևում, ցանկացած միջամտություն պետք է արդարացվի՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝ արդյոք միջամտությունը սահմանված էր օրենքով, արդյոք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ, արդյոք միջամտությունն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում: Նշված հարցերից որևէ մեկի բացասական պատասխանի դեպքում, պետք է եզրակացնել, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ 9-րդ հոդվածի խախտում:

Արդյոք միջամտությունը «նախատեսված է օրենքով»

Մակվեցյանի՝ ՄԻԵԿ 9-րդ հոդվածով սահմանված՝ սեփական դավանանքը քարոզելու իրավունքի միջամտության իրավական հիմքը, ըստ դատարանի, ՀՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 1-ին մասն է: Մակայն այն հանգամանքը, որ միջամտությունը սահմանված է օրենքով դեռ բավարար չէ «նախատեսված է օրենքով» չափանիշը բավարարելու համար: Որպեսզի պետությունը կարողանա արդարացնել միջամտությունը, այն պետք է ցույց տա, որ կիրառված քրեաիրավական նորմը համապատասխանում է մի շարք որակների, մասնավորապես, օրենքը պետք է լինի

հասանելի և *կանխատեսելի*: Ուստի, նման դեպքերում ՄԻԵԴ-ը կարող է գործը քննել ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածով սահմանված օրինականության իրավունքի հետ միասին:²

ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: ՀՀ-ում անձին քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու համար անհրաժեշտ է որպեսզի անձի արարքը պարունակի համապատասխան նորմում ամրագրված բոլոր հատկանիշները, իսկ այդ հատկանիշները պետք է լինեն հասկանալի և կանխատեսելի: Եթե անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության և պատժի՝ խախտելու համար քրեաիրավական նորմ, որը բավարար հստակությամբ չի սահմանված և անձը չէր կարող նորմի բովանդակությունից կանխատեսել իր գործողությունների հետևանքները, ապա պետք է եզրակացնել, որ անձը դատապարտվել է մի արարքի համար, որը քրեորեն պատժելի չէր:

ՄԻԵԴ-ը «օրենքով նախատեսված» արտահայտության վերաբերյալ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Առաջին, օրենքը պետք է բավականին հասկանալի լինի, այն է՝ քաղաքացին պետք է ի վիճակի լինի օգտվելու տվյալ դեպքում կիրառելի իրավական նորմերից: Երկրորդ, իրավական նորմը կարող է համարվել «օրենք» միայն բավարար հստակությամբ ձևակերպված լինելու դեպքում, որպեսզի քաղաքացին հնարավորություն ունենա կարգավորելու իր վարքագիծը, այսինքն՝ քաղաքացին պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ չափով կանխատեսել տվյալ արարքի հնարավոր հետևանքները, իսկ անհրաժեշտության դեպքում անել դա պատշաճ խորհրդատվություն ստանալուց հետո»:³

ՔՀԻ-ն գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը չի համապատասխանում կանխատեսելիության, իրավական որոշակիության սկզբունքներին: Նշված նորմը նախատեսում է քրեական պատասխանատվություն և

² *Կոկինակիսի ընդդեմ Հունաստանի (Kokkinakis v. Greece, Series A No. 260-A (1993) 17 EHRR 397)*, ՄԻԵԴ 1993թ. մայիսի 25-ի վճիռը, պարբ. 32-35: Տես նաև՝ *Լարիսիսի ու Օրսի ընդդեմ Հունաստանի (Larissis and Ors v. Greece)* գործով ՄԻԵԴ 1998թ. վճիռը, պարբ. 39-45

³ «Մանդի Թայմս» ընդդեմ Միացյալ Թագավորության (*Sunday Times v. The UK*) գործով ՄԻԵԴ 1979թ. վճիռը, պարբ. 49

պատիժ՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելու համար՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին:

Առաջին, նորմից պարզ չէ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների շրջանակը, այսինքն այն իրավունքներն ու ազատությունները, որոնց խախտումը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության և պատժի: Ուստի այս առումով այն բավարար հստակություն և կանխատեսելիություն չի ապահովում: Մարդու հարյուրավոր իրավունքներ և ազատություններ սահմանված են տասնյակ միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում և միջազգային սովորութային իրավունքում, ներառյալ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան կից արձանագրություններով և այլն: Մարդու և քաղաքացու իրավունքներ և ազատություններ սահմանված են նաև ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում: Նորմից հասկանալի չէ, թե այն ուղղված է այս բոլոր իրավունքների պաշտպանությանը, թե դրանցից մի քանիսին: Այսինքն, յուրաքանչյուր գործով դատարանը պետք է որոշի, թե որոնք են տվյալ հանցագործության օբյեկտները, մինչդեռ դրանք անհատները նախապես չէին կարող կանխատեսել և համապատասխանաբար կարգավորել իրենց վարքը:

Երկրորդ, նորմից հասկանալի չէ, թե ինչպես ֆիզիկական անձը կարող է ուղղակի կամ անուղղակի խախտել մարդու և քաղաքացու՝ անորոշ կերպով սահմանված իրավունքներ ու ազատությունները: Գոյություն ունեն մի շարք իրավունքներ, որոնք ֆիզիկական անձը պարզապես չի կարող խախտել, թե ուղղակի, թե՝ անուղղակի: Օրինակ՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի արդար դատաքննության իրավունք, իսկ 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: Այս իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու պարտականությունները կարող է կրել բացառապես պետությունը՝ ստեղծելով պետական հաստատություններ, ընդունելով օրենքներ և ապահովելով պատշաճ ընթացակարգեր: Ուստի միայն պետությունը կարող է խախտել դրանք: Ֆիզիկական անձը չի կարող ուղղակի կամ անուղղակի խախտել մեկ այլ անձի՝ արդար դատաքննության կամ պետությունից իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ստանալու իրավունքները: Քննարկվող նորմը յուրաքանչյուր անգամ կիրառելիս դատավորը պետք է մեկնաբանի այն՝ պարզելու համար, թե արդյոք ամբաստանյալը կարող էր խախտել վկայակոչված իրավունքը, թե՝ ոչ, քանի որ նորմից դա ինքնին հասկանալի չէ: Հասկանալի չէ նաև այն հանգամանքը, թե նորմի տառացի մեկնաբանությունից դատարանն ինչպես պետք է հանգի եզրակացության, թե որ իրավունքը կարող էր, իսկ որ իրավունքը ամբաստանյալը չէր կարող խախտել:

Հաշվի առնելով նշված պատճառաբանությունը, պետք է եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը չի բավարարում կրոնի ազատության իրավունքի միջամտության հիմք հանդիսացող և քրեաիրավական պատասխանատվություն և պատիժ սահմանող նորմի իրավական որոշակիության պահանջները:

Եզրահանգում

Սույն վերլուծությունը հիմնավորում է, որ Մակվեցյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 1-ին մասով սահմանված հանցակազմը: Մասնավորապես, Մակվեցյանը չէր կարող խախտել գոյություն չունեցող մարդու և քաղաքացու իրավունք: Ավելին, ֆիզիկական անձինք չեն կարող ուղղակի խախտել ՀՀ Սահմանադրության և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերը:

Հիմնավորվեց նաև, որ դատարանի դատավճիռը հանդիսանում է միջամտություն՝ սեփական համոզմունքները քարոզելու Մակվեցյանի իրավունքի իրականացման նկատմամբ, իսկ նման միջամտությունը նախատեսված չէր օրենքով, քանի որ 143 հոդվածի 1-ին մասը չի բավարարում իրավական որոշակիության չափանիշը: Արդյունքում, խախտվում է ոչ միայն կրոնի ազատության իրավունքը, այլև օրինականության իրավունքը, որոնք սահմանված են համապատասխանաբար՝ ՄԻԵԿ-ի 9-րդ և 7-րդ հոդվածներով: